

«Գրադարանների ձևավորումն ու զարգացումը. հին ժամանակներից մինչև մեր օրերը»

*Ուսանող՝ Ջարուհի Վարդանյան
Դեկավար՝ Լուսինե Ալեքսանյան*

Գրախոս՝ Հասմիկ Ղազարյան

Աշխատանքը բաղկացած է երեք մասից և եզրակացությունից: Շրջանավարտը բավականին ընդարձակ աշխատանք է կատարել՝ կարդալով աշխարհի տարբեր գրադարանների մասին, ընտրելով և ներկայացնելով դրանց պատմությունը: Հեղինակը օգտվել է նաև օտարալեզու աղբյուրներից՝ թարգմանելով և ներկայացնելով նաև այդ տեղեկությունը:

Այնուամենայնիվ աշխատանքը զերծ չէ թերություններից, որոնցից ամենաակնառուներն են.

1. Բաժիններն իրենց բովանդակությամբ գրեթե չեն տարբերվում. բոլորը տեղեկատվական են: Այնինչ աշխարհի գրադարաններին ծանոթանալուց հետո արժեր նաև դրանց և ոչ միայն ամենահինների ու հայտնիների զարգացմանը ծանոթանալ: Գրադարանային գործն առաջընթաց ունի՞, թե դա մնում է սոսկ որպես տպագիր նյութի պահոց: Կան, չէ՞, շրջիկ գրադարաններ, «Կանգառային», պարզապես գիրք փոխանակելու՝ ինչ-որ տեղ դնելու-վերցնելու պրակտիկան: Արժեր ասել, որ գնալով գնահատվում է ոչ միայն ինքը՝ գիրքը, այլև դրա բովանդակությունը: Դրա համար վերցնել-չվերադարձնելը այլևս արդիական չէ:
2. Խոսք չկա էլեկտրոնային գրադարանների մասին: Դրանց հպանցիկ, այն էլ բացասական երանգով անդրադառնում է միայն եզրակացության մեջ: «Այոց փորձ» ասելով՝ հասկանում ենք աշխատանքի փորձը, ոչ թե պատմությունը:
3. Գրեթե ուսումնասիրված չեն հայկական գրադարանների բաժիններն ու գործունեությունը: Մենակ Խնկո Ապոր գրադարանի բաժիններն են մի քիչ նշված:
4. Կան անհասկանալի թվեր, ինչպես՝ «1982թվին լրացել է Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի 150 ամյակը» (ինչպե՞ս, եթե հիմնադրվել է 1921 թվին): Նույն թեմայով՝ Ազգային (նույն հանրայինը) գրադարանի 180 ամյակը. հիշենք՝ հիմնադրվել է 1921 թվին:
5. «Եզրակացություն» բաժինը չի բխում նյութից: Ինչի՞ց է երևում, որ գրադարանները համախմբում են բոլորին, երբ վերևում նշվում է, որ որոշ գրադարաններ սպասարկում են խիստ սահմանափակ շրջանակների՝ տվյալ համալսարանի ուսանողությանը, հատկապես կառավարության անդամներին և այլն: Երևի ժամանակակից գրադարանների շուրջ խոսելիս արժեր հիշել, որ դրանք նորարարական են ոչ միայն սպասարկման նոր ձևերով, ընթերցասրահների նոր, հարմարավետ կահավորումով (բազմոց, պտկած կարդալու հնարավորություն, սնվելու մատչելիություն և այլն), այլև հենց շենքն են գրավիչ կառուցում:
6. Չեմ կարծում, թե իմաստ ունեն օտարալեզու հատվածը ներառել աշխատանքի մեջ. կարելի էր պարզապես հղում դնել դրա վրա:
7. Կան վրիպակներ, օրինակ՝ Հայկական ՄՍՀ-ի փոխարեն գրված է Հայկական ՄՍՍ (մի տեղ նույնիսկ «Հայկականը» փոքրատառ է գնացել):
8. Կան նաև նախադասության կազմության մեղանշումներ:

Այս ամենից ելնելով՝ առաջարկում եմ աշխատանքը գնահատել 7 (10 միավորանոց համակարգով) կամ 16 (20 միավորանոցով):